



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն**  
**Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ**  
**Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1  
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06  
 Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«26» հունիսի 2024 թվականի N 151-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐՁԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 24/4  
 ՀԱՍՑԵԻ 6,38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
 ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ 7,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ  
 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիյան փողոցի N 24 շենքի N 35 հասցեի դիագնոստիկ կենտրոնը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06222024-08-0035 վկայական):

Քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիյան փողոցի N 24 շենքի N 35 հասցեի դիագնոստիկ կենտրոնին հարակից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29052024-08-0052 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիյան փողոցի N 24/4 հասցեի 6,38 (վեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ հարթակը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 7,58 (յոթ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին վարձակալության տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, շինությունը և հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ տրամադրել մրցույթով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ բաժնի 34,2-րդ, 35-րդ կետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 25-ին N 17702 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիյան փողոցի N 24/4 հասցեի 6,38 (վեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ հարթակը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 7,58 (յոթ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության



հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը իրականացրած քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ (19)

Դեմ (0)

Ձեռնպահ (1)  
Կ.Սալխասյան

- Վ.Սամսոնյան
- Գ.Մելիքյան
- Մ.Սահակյան
- Տ.Հովհաննիսյան
- Ա.Հովհաննիսյան
- Ն.Պողոսյան
- Գ.Պասկևիչյան
- Խ.Վարաժյան
- Հ.Ասատրյան
- Ս.Խուբետարյան
- Ձ.Միքայելյան
- Ե.Խանամիրյան
- Լ.Մուրադյան
- Հ.Ստեփանյան
- Գ.Մանուկյան
- Կ.Սոսյան
- Ս.Աղամյան
- Ն.Միրզոյան
- Հ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԻՍԿԱԿԱՆԻՇԵՏ ԾԻՇՏ Է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  
ք.Գյումրի  
«26» հունիսի, 2024 թվական



ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ



